

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի օգոստոսի 7-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/2 պայմանագրում 2020 թվականի հոկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1 ՀՀ կառավարության 24.09.2020թ N1589-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն Համաձայնագրով հաստատվել է վճարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Փոփոխության առաջացման պատճառ N2 Տեխնիկական վրիպում:

Փոփոխության նկարագրություն Պայմանագրի 8.11 կետի երկրորդ նախադասության մեջ <<3>> թիվը փոխարինվել է <<2>> թվով:

Փոփոխության հիմնավորում Պայմանագրի 8.5:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ք. Երևան

« 20 » « 10 » 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գրիգորյան Շին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 24.09.2020թ. N 1589-Ն որոշումը և ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 07.08.2020թ. կնքված ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1 կետում ավելացնել նոր 5.1.2 ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<5.1.2 Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների դիմաց 2020թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է 63 612 000 (վաթսուներեք միլիոն վեց հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ, որից 10 602 000 (տաս միլիոն վեց հարյուր երկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն>>:

1.1.2 Պայմանագրի 8.11 կետի երկրորդ նախադասության մեջ <<3>> թիվը փոխարինել <<2>> թվով:

1.1.3 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N3-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035772
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<Գրիգորյան Շին>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշակյան 8փ. տ.92
<<Հայթիզնեբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014101961942
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝

Գ. Գրիգորյան

(ստորագրություն)



